

— Դաւիթ, կըսի, ինչ դիւ գնացիր, չիւր միայ էդա շե-
ւարքեր կըլլն Աստուած կը կանչին, կը վախենէն Մորրայ Մէլք
քի սպանի. տածկընիւր գէն, քաղքը մարդիւր յըմեն սպանէն,
կնկաիր տանէն, որ քիւ գալ լսան, յըմեն խնդացան ու ուրա-
խացան. ջիւչ, պոտիկ քիւ յապեօլ էկան:

— Դէ, դառցէք, գնացէք: Ըծը տուգան էրէք, Մէլք սպա-
նիւր իմ, դէ դառցէք, դէ, դառցէք:

Էդա խեղճ մարդիւր էկան, արխային անիւր նստան. էլ սիկ
չըն վախենայ:

Դաւիթն էլ էկաւ ուր տուն, նստաւ:

230. Էդ պառաւ ըլաւ, էկաւ Դաւիթ մօտ. էսաց.— Դա-
ւիթ, բարեօլ էկիր, Դաւիթ, բարեօլ էկիր:

— Աստըծու բարին քի, պառաւ:

— Տխար, վուր իս քիւ յըմեն ճանբախ շանք տուիմ.
տպա որ ի՛ս քի չըսէր, դիւ բիբիկ, ծառմ առիր էր կէրթէր
Մէլքը վերայ կոււ, տխար, կոււ քեանիմ դեօռի. քիւ խօր
խաթըր խամար քի յեմեն բան շանք տուր:

— Պառաւ, էսաց, ըծը քինէ մինաթ ի. կդեան ըլնըս ըծը
մէր, ըծը մէր չունիմ:

231. — Դաւիթ, իս էլի քի մէր իմ, իս կերթամ իմ տուն,
ինչ բան լսիմ. էլի՛ կդեամ, քի կըսիմ. սիկ մի վախենայ, Դա-
ւիթ, ծլիս, ծաղկըս, չիւր միայ պոտիկ էր, ջիւչացար. ծոււ
էր, խէլքըվացար, էլ ըս տե մի նստի, կը գնիս վար Յեօվանին
կըսիս «Իմ խօր յեօգէն պատրաստի, վուր իս կերթամ իմ
խօր յեօգէն նստիմ, հըմա խօրոս պատրաստի: Քեօ խօր սան-
դըխքեր էն տեղն ի. քիւ ձեռնով քիւ խօր շուրիւր կը խանիս,
ծալիս, գնիս սնաիւկ, թուրն քի՛ւ ձեռնով էլ կախիս, մէկ
մարդ էլ կը բռնի քիւ յառէջ, քի ախանջ էնը. մէկ մշակ էլ
կը բռնիս, քեօ ձին խօրոս պախի: Դաւիթ, մնացի բարի. իս
կերթամ:

232. Դաւիթ Յեօվանին կըսի.

— Յեօվան, իմ խօր յեօգէն պատրաստի: Չըմա խօրոս
պատրաստի, լիւ, դօշակ շնաթալ, բարձիւր շնաթալ, իս աէր-
թամ, իմ խօր յեօգէն տը նստիմ:

— Խմ, կըսի, միայ կը պատրաստիմ: Էդա Սասունայ ճըագ
չիւր միայ ընցուկ էր, միայ Սասուն ճըագ վառուաւ, տպա
չը պատրաստիմ, քիւ էրածն որ դիւ էրիւր, իս շնա կը խըն-
դանամ, որ դիւ սիօն կարըճ իս. իս գաիմ որ ախշար յըմեն
իմն ի, իս կը խնդանամ որ դիւ ասիս, ծիծղանք: